

Հ Ա Ն Գ Ի Ս Տ

Տ. ՅՈՎՀԱՆՆԷՍ ՎՐԴ. ԷԹՄԷՔՃԵԱՆԻ

Յաւով կ'արձանագրենք մահը Միաբանութեանս տարէց անդամներէն Հոգ. Տ. Յովհաննէս Վրդ. Էթմէքեանի, որ յետ երկարատեւ հիւանդութեան կնքեց իր մահկանացուն 7 Մարտ 1950 երեքշաբթի երեկոյեան ժամը 6.10ին, իր բնակարանին մէջ:

Հանգուցեալը ծնած էր Այնթապ 1875-ին: Իր ուսումը ստացած է տեղւոյն Ազգային վարժարանին մէջ, որուն շրջանը աւարտելէ յետոյ իր ընդունակութիւններուն բերմամբ կը կարգուի ուսուցիչ կրօնական երաժշտութեան դասերու եւ դպրապետ եկեղեցւոյ:

1900-ական թուականներուն որպէս ուսուցիչ եւ դպրապետ կը փոխադրուի Հալէպ, ուր 1909-ին կը ձեռնադրուի քահանայ Խապայեան Տ. Սահակ կաթողիկոսէն:

Այնուհետեւ Տ. Յովհաննէս քահանայ տեւադպին եռանդով կը փարի իր կրօնական ասպարէզին, մասնաւորապէս 1914-ի Մեծ պատերազմին, բերելով իր անձնուէր ծառայութիւնը այն բոլոր կազմակերպութիւններուն՝ որոնք կանչուած էին լեցնելու բազմապիսի պահանջները Թրքահայաստանէն խուժող հազարաւոր հայ զաղթականներուն: Իր միջնորդութեամբ թրքական բանտէն կ'ազատին ծանօթ հայեր: Հալէպի մէջ այդ շրջաններուն ծայր տուող համաճարակներու ընթացքին ան իր հայրական խնամքը կը բերէ ոչ միայն հայորդիներու, այլ նոյնիսկ անգլիական բանակի զինուորականներու որուն համար կ'արժանանայ մասնաւոր զնահատանքի:

1911-ին կ'այրիանայ, ու մինչեւ 1939 կը պաշտօնավարէ Հալէպի մէջ, վայելելով իր ծուխին խոր համակրանքը իբրեւ հեզահամբոյր եւ ամբասիր եկեղեցական:

1939 Երուսաղէմ կուգայ ու կ'անդամակցի Ս. Յակոբեանց Միաբանութեան: Միաժամանակ ստանալով վեղար եւ ապա նաեւ վարդապետական աստիճան, Լուսահոգի Տ. Մեսրոպ Ս. Պատրիարքէն: Կը պաշտօնավարէ Ս. Աթոռէն ներս իբրեւ ժամարար, ժամօրհնող, խոստովանահայր, զանձատան մարմնի անդամ, Տնօրէն Ժողովոյ անդամ եւ այլն:

Երկու տարիներէ ի վեր դատապարտուած էր անգործութեան իր հիւանդութեան պատճառաւ:

Հայր Յովհաննէս եկեղեցասէր, հեզահամբոյր եւ պարկեշտ եկեղեցական մը եղաւ, դառնալով առարկայ բոլորի համակրանքին:

Իր վերջին օժման եւ թաղման արարողութիւնները կատարուեցան 8 Մարտ Զորեքշաբթի առտու նախագահութեամբ Պատրիարքական Տեղապահ Գեր. Հօր, իսկ դամբանականը խօսեցաւ Հոգ. Տ. Հայկազուն Վրդ. Աբրահամեան, վեր հանելով հանգուցեալի կեանքն ու ծառայութիւնները Հայց. եկեղեցիին եւ հայ ժողովուրդին համար:

Օրհնութիւն իր յիշատակին եւ հանգիստ իր հոգիին: